

4320

281.64

U-51

281.64

Ա-51

ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ
ՂԵԻՈՆԴ ԵՊՍ. ԳՈՒՐԵԱՆԻ
Ո Ի Խ Տ Ը

ԵՒ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՊԱՏԳԱՄԸ

ԱՐՏԱՍԱՆՈՒԱՆՐ

1931 ՀՈԿՏԵՄԲԵՐ 11 Ի

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԷՋ

Ի ՆԻԻ ԵՈՐԲ



ՆԻՒ ԵՈՐԲ

1931



2010

ԱՌԱՋՆՈՐԴ ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ
Ո Ւ Խ Տ Ը

ՆԻԻ ԵՈՐԳԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՁ
(1931 ՀՈԿՏ · 10)

+

Ո Ւ Խ Տ Ը

«Առաջի Աստուծոյ եւ ի ներկայութեան Ա-
«մերիկահայ Երեսփոխանական Ժողովի հրա-
«պարակաւ կ'ուխտեմ հաւատարմաբար հսկել
«Ամերիկահայ Սահմանադրական օրինաց ան-
«թերի գործադրութեան:»

Ազնիւ Երեսփոխաններ՝,

Հանդիսաւոր այս ուխտը զոր կատարեցի
Աստուծոյ սեղանին առջեւ՝ կը գնէ զիս ծանր
պատասխանատուութեան մը հանդէպ: Ամերիկա-
հայ Երեսփ. Պատկ. Ժողովի կողմէ համակիր
վստահութեամբ մը ինծի յանձնուած Առաջնոր-
դական պաշտօնը՝ իր աւագ կարեւորութիւնը
ունի այս պատմական շրջանին մէջ:

Երանի՜ թէ բոլոր համակրանքներուն ար-
ժանանալու պատիւը վայելի ցվերջ, եւ օգտա-
կար գործունէութեամբ մը կարենայի պատկել
իմ վրայ դրուած յոյսերն ու ակնկալութիւն-
ները:

Ուխտ մը կատարեցի, այսինքն թէ հրապա-
րակաւ եւ Հանդիսաւորութեամբ արտայայտ-

60558- ախ

3537- 23

ուեցայ թէ կամովին եւ սիրայօժար յանձն
կ'առնեմ այն պաշտօնը զոր հաճեցաք ինձ վըս-
տահել:

Ուխտ մը, այլ բառը կեղակարծ բառ մը
պիտի ըլլայ եւ անշահակ՝ եթէ ուխտեալը բո-
նութեան կամ քմահաճոյքի մարդն է: Ուխտը
նախապաշարում մը չէ, ալ սուրբ պարտա-
կանութեան մը սրբազարծեալ եւ մեծավայելուչ
սլացքն է զէպի բարին, զէպի արդարն, զէպի
ճշմարիտը, զէպի օրէնքն, զէպի լոյսն, զէպի
զիտակից յատաջլիմութիւնն:

Ուխտը ըրի ոչ թէ ստրուկ պայմաններով
հոկելու համար ինծի յանձնուած գործը, ալ
ըրի պատրաստակամ պարտաճանաչութեան
ոգիով, եւ Ուխտը իր նշանակութիւնը
պիտի կորսնցնէր եթէ պարտականութիւնս չու-
զէի կատարել արդարատիրութեամբ, անկողմ-
նակալութեամբ, պարկեշտութեամբ, օրինակե-
լի վարքով, արիութեամբ եւ հայրական քաղ-
ցըր ոգիով:

Հոս Առաջի Աստուծոյ սեղանին ոչ միայն
եւ կատարած եղայ ուխտ մը, ալ եւ ինձմով
եւ դուք: Որքան ընտրուած հրամանատարը
նոյնքան անոր ընտրեալ զինուորները ուխտեալ-
ներ կը համարուին Պատերազմի մը համար, որ
իրենց առջեւ բացուած է: Պատերազմի մըն է
որ կը կոչուինք ամէնքս, պատերազմ ընդդէմ
ապիտութեան եւ ապաղղայնացման:

Վեր բարձրացուցէ՛ք ուրեմն արդարութեան
եւ օրէնքի զէնքերը, վի՛ր բարձրացուցէ՛ք սի-
րոյ եւ համերաշխութեան դրօշը, յառա՛ջ, յա-
ռա՛ջ, եւ յաղթանակը արդէն ապահովուած՝
փայլուն օրերու թուականը կարելի պիտի
ըլլայ ողջունել:

Կ'օրհնեմ զՁեզ ամէնքդ, կ'օրհնեմ Ձեր բա-
րենախանձ մտադրութիւնները եւ օգտաշառ
ծրագիրներն, եւ կը մաղթեմ ամէն արդիւնաւո-
րութիւն եւ յաջողութիւն:

ԱՌԱՋՆՈՐԴ ԳՈՌԻԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՊԱՏԳԱՄԸ

+

(Կարդացուած Ամերիկահայ Երեսփ. Ժողովի
1931 Հոկտ. 10-ի բացման նիստին մէջ:)

Այնիւ Երեսփոխաննէ՛ր,

Այն օրէն երբ Պատկ. Երեսփ. Ժողովդ կո-
չեց զիս ի պաշտօն Առաջնորդութեան՝ այն օ-
րէն իսկ իմ վրայ ծանրացաւ ահաւոր պատաս-
խանատուութիւն մը եկեղեցական, ազգային,
վարչական, կրթական, կազմակերպական գոր-
ծին Ամերիկահայ մեծ թեմին: Առաջին օրէն
իսկ զգացի թէ ժամանակն ու պարագաները բա-
ւական ծանր են, եւ յոյսս դրած Աստուծոյ ան-
հուն ոգորմութեան եւ Պատկ. Երեսփ. Ժողովիդ
եւ Կեդր. Վարչութեան, ինչպէս եւ իմ սիրելի
Ժողովուրդիս առ իս ցոյց տուած սիրոյն եւ
համարումին վրայ՝ ձեռնարկեցի ՚ի գործ:

Այս օր, այս հանդիսաւոր եւ նշանակալից
պահուն, ինձ համար նուիրական պարտակա-
նութիւն մըն է սրտագին շնորհակալութիւններս
յայտնելու Պատկ. Երեսփոխանական Ժողովիդ՝
իմ անձիս նկատմամբ ցոյց տուած վստահու-
թեան համար:

Առաջին առթիւ իսկ հիացումով նշմարեցի
Ժողովուրդիս ամէն շրջանակներու մէջ հա-
ւատքի զօրեղ եւ սքանչելի կենսունակութիւնը,
եւ եկեղեցւոյ սրբութեանց եւ աւանդութեանց
նկատմամբ ցոյց տուած նախանձախնդրութիւ-

ներ՝ որ ստուգիւ Հայութեան ինքնութեան պահպանման գլխաւոր պայմանն է, եւ ժողովուրդիս այս հոգեկան եւ բարոյական առաւելութիւնները զիս առաջնորդեցին այն համոզման թէ Ամերիկահայ թեմը արդաւանդ դաշտ մըն է, եւ հոն կատարելիք գործեր կան, եւ թէ անհրաժեշտ է գործնական միջոցներ ձեռք առնել արդիւնաւորելու համար,

1) Եկեղեցիով՝ ժողովուրդի հոգեւոր դարգացումը,

2) Դպրոցով՝ երիտասարդութեան ազգային ինքնագիտակցութիւնը,

3) եւ Առաջնորդարանով՝ թեմին կազմակերպութիւնը:

Այս երեք հաստատութիւնները միութիւն մը կը կազմեն, եւ այս երեակ միութիւնը պէտք է ցմիշտ միութիւն մը մնայ համակամ եւ համագործ, եւ երբ փորձուինք մէկը միւսէն բաժնել Ամերիկահայութեան գոյութեան հիմը խախտած պիտի նկատուէինք:

Առաջնորդի պարտաւորութիւններէն մին ըլլալով այցելել թեմերը, պարտք համարեցի Կեղերնի եւ կարգ մը թեմերու եկեղեցիները այցելել, եւ ըստ հրաւիրանոց Պատ. Հոգաբարձութեանց՝ ամէն ուր որ այցելեցի, պատարագեցի եւ Բանին Կենաց քարոզութեամբ մխիթարեցի եւ ոգեւորեցի ժողովուրդս: Այսպէս հետզհետէ այցելեցի եւ պատարագեցի՝

Յունիս 7 ին Մայր Եկեղեցի Ս. Լուսաւորիչ.

Յունիս 14 ին Պրիճօրթ Ս. Համբարձում.

Յունիս 21 ին Նիւ Եփեսոս Բ. Թաւուս Ս. Խաչ.

Յունիս 28 ին 30-րդ Եկեղեցի Ս. Լուսաւորիչ.

Յուլիս 5 ին Մայր Եկեղեցի կրկին.

Յուլիս 12 ին Պրուքլին՝ Ս. Երրորդութիւն.

Յուլիս 19 ին Պոսթըն՝ Ս. Երրորդութիւն.

Յուլիս 26 ին Ուսարը՝ Ս. Փրկիչ.

Օգոստ. 2 ին Բրավիաէնս՝ Ս. Թարգմանչաց.

Օգոստոս 11 ին Լոպէլ՝ Ս. Վարդանանց.

Օգոստ. 16 ին Նիւ Պրիթըն՝ Ս. Ստեփաննոս.

Սեպտ. 6 ին Բ. Թաւուս կրկին

Սեպտ. 13 ին Եռնիւրն Սիթի Ս. Խաչ

Սեպտ. 20 ին Նորթ Ֆիլադելֆիա Ս. Լուսիչ.

Սեպտ. 27 ին Բ. Թաւուս կրկին.

Կեղերնի եւ կարգ մը թեմերու տուած այցելութեանցս միջոցին Գեր. եւ Արթ. Հոգ. Հովիւներու եւ Պատ. Հոգաբարձութեանց եւ ժողովուրդի կողմէ ինծի ընծայուած պատիւներուն եւ վայելածս ընդունելութեանց համար իմ հրապարակային շնորհակալութիւնս կը փութամ յայտնել: Կայարաններէն սկսեալ մինչեւ Եկեղեցի, Եկեղեցեաց մէջ, եւ ապա շքանշաններու առթիւ մեծահանգէս եւ ազգային պատուարեր եղանակաւ ընծայուած յարգանքներն զորս օրը օրին Ամերիկեան եւ Ազգային թերթերու մէջ արձագանդ գտան, արժանի կ'ընծայեն Ազգը ամէն զնահատման: Հայ Ազգը գիտէ ամէն առիթի մէջ յարգել եւ մեծարել իր Հոգեւոր Հովիւներն եւ Առաջնորդներն, եւ ապացոյցը տալ՝ թէ օրինասէր եւ կարգապահ ժողովուրդ մըն է ինք:

Որքան տառն Ամերիկահայ ժողովուրդը կապուած է իր Եկեղեցւոյ աւանդութեանց եւ սրբութեանց, աւանդութիւններ եւ սրբութիւններ՝ որոնք բերեղացումն են Հայուն հանճարին, հոգեւոր կարողութեանց, գրական եւ գեղարուեստական ներշնչումներուն, համոզուած եմ որ պիտի կրնայ հեռու պահել ազգազոյնացումի ամէն վտանգները:

Ամէն ուր որ գտնուեցայ շեշտեցի սրբազան առաւելութիւնը եւ անուրանալի կարեւորութիւնը Հայ Ազգային Եկեղեցւոյ, որ ցայժմ իր ստեանց վրայ կը սնուցանէ, կը դաստիարակէ իր խաղաղութեան, սիրոյ եւ սրբութեան պատգամներովը, եւ որ իր առաքելական ծաղումովը եւ հնութեամբը պատկանելի եղած՝ ուրոյն պատուոյ տեղը դրաւած է նաեւ բոլոր քրիստոնեայ եկեղեցեաց մէջ:

Անշուշտ հետաքրքիր է Պատկ. Երեսփ. Ժողովի գիտնալու համար թէ ի՞նչ տպաւորու-

թիւններ կրած եւ Կեղերոնի եւ Կարդ մը Թեմա-
րու ալցեկութեանց միջոցին Հովիւներէ, Հո-
գարարձութիւններէ եւ Կրթական գործէ :

Հովիւները. — Մեր Եկեղեցւոյ Հովիւնե-
րը ստուգել գրեթէ ատանց բացառութեան գը-
տայ գիտակից իրենց կոչման եւ նախանձախն-
դիր իրենց պաշտօնին : Մեր Հովիւներուն մեծ
մասին կրօնական դարգացումն ինքնօգնու-
թեամբ ստացուած ըլլալով՝ կարելի չէ կշար
ժողովուրդի բաղձանաց համեմատ ամէն տեղ
ունենալ Բեմի համար պատրաստուած քարո-
զիչ Հովիւներ : Մեր Հովիւներուն վրայ կ'ու-
զենք քարոզիչի ալ ատուելութիւններ տեսնել,
ասիկա զէթ ատայժմ դժուար է, զի մեր Հովիւ-
ներուն վրայ ծանրացած ըլլալով հոգեւոր մա-
տակարարութեան եւ հովուական ծանր գործը՝
չեն կրնար ներկայ իրենց գրութեան մէջ գո-
հացուցիչ կերպով ինքզինքնին տալ լաւ ըմբո-
նուած քարոզութեան վարժութեանց :

Անշուշտ հարկ է անպայման Եկեղեցւոյ
բեմը բարձրացնել, բեմը եկեղեցւոյ բերանն է,
ուսկից պէտք է հոսի Աւետարանի Աստուածա-
յին կենտասիւթը հոգիները ներշնչելու, սրտերը
յուզելու եւ հոգեւոր եւ ազգային եռանդ ստեղ-
ծելու համար : Ծէշտերն եւ արարողութիւնները
անազգեցիկ կը մնան երբ Բեմը լուս կը մնայ :
Գէթ ատայժմ կը խորհիմ, եթէ նիւթական զիւ-
րութիւններ ունենայ Առաջնորդարանը, ամէն
կիրակիի համար յատուկ քարոյներ հրատարա-
կել եւ զրկել եկեղեցիներուն, հոգեւոր Հովիւ-
ներու եւ հոգարարձութեանց որպէսզի այն Եկե-
ղեցիներն որ զրկուած են բեմախօս քարոզիչնե-
րէ, հոն կարգալ տան լաւ ատուգանութիւն ու-
նեցող պաշտօնէի մը կամ գալիքի մը, մինչեւ որ
նոյն այն Եկեղեցիները ունենան իրենց քարո-
զիչ Հովիւները : Եթէ Երուսաղէմի նորինձայ-
ներէն զէթ երկու վարդապետներ կարենամ ա-
պահովել մեր Թեմերուն համար, մասամբ
իւրիք գարման մը տարած պիտի նկատուինք Ա-
մերիկահայ եկեղեցւոյ բեմական գործին : Այս

մտօք արդէն դիմուած է Երուսաղէմի Պատ-
Տեղապահին եւ նորընտիր Ս. Պատրիարքին եւ
խոտացուած է ուշադրութեան առարկայ
գարծնել մեր զիմուքը :

Հովիւներու վրայ միայն բեմախօսի առա-
ւելութիւնը չէ որ կը փնտռենք, այլ կ'ուզենք
իրաւամբ որ անոնք սատար հանդիսանան ժո-
ղովուրդի աշխուսացման, իւր հոգիներու ուղի-
ցոյցը ոչ թէ քաշուած եւ ատանձնական կեանք
ապրին, այլ հանդիսաւոր կեանք մը, ուր ծա-
ռայութիւնը փառք մը եւ սպասաւորութիւնը
պարծանք մը նկատուի :

Շատ զժուարտութիւններ կան հոգեւոր հո-
վիւին առջեւ այնպիսի ժողովրդեան մը մէջ՝
որ անհատներու նկարագրի, խառնուածքի, հա-
մոցման, զգացումներու, միտումներու, յու-
զումներու եւ մտածումներու անհուն գանա-
ղանութիւններէն կազմուած է, եւ հետեւարար
հովիւին պարտականութիւնը պէտք է ըլլայ ա-
մէն գանաղան տրամադրութիւնները ձուլել Ե-
կեղեցւոյ եւ ազգային մեծ հաւատքի յայտ-
նութեանը մէջ : Հովիւներն սրբութենէ, արդա-
րութենէ, ճշմարտութենէ եւ անաշուտութենէ
զուրս ուրիշ բանի վրայ պէտք չէ վստահին,
եթէ կ'ուզեն բարձր մնալ իրենց պաշտօնին մէջ :

Հոգեւոր գարգացումի ի նպաստ կը խորհ-
ուի ձեռնարկել Կրօնաթերթի մը հրատարա-
կութեան, որուն մէջ ոչ թէ զրական, բանասի-
րական յօդուածներ են որ պիտի երևին, այլ
զուտ կրօնական եւ եկեղեցական եւ տօնախմ-
բական զիտելաց, իրրեւ «զիտելիք պար-
տիք» ժողովրդեան : Այս մտօք զիմուած է ի
Պոլլա այնպիսի հոգեւորականի մը որ ատանձնէ
թէ քարոզչականի եւ թէ հրատարակութեան
գործ :

Հոգեւոր գարգացման նպաստած պիտի ըլ-
լանք նաեւ Հայ-Անգլիկերէն երկկեզուեան պա-
տարագամտոյցի հրատարակութեամբ, եւ
արդէն իսկ ուրախ եմ յայտնելու թէ Բրազիլ-
աչիս — Բութաքէթի մեր ազնիւ Նաճարեանց
նախաձեռնութեամբ մեր ի Մանչեսթր հրա-

տարակամ երկկողմանի պատարագամատուցին
Բ. տպագրութեան գործը ի Պոսթըն յառաջ կը
տարուի, եւ վստահարար կը յուսամ թէ Նոր
Տարւոյ սկիզբը Եկեղեցիները պիտի կրնան ու-
նենալ որոշ քանակութեամբ այդ գրքէն եւ Հայ
անդլիախօս երկրասարգութիւնն ալ մեծապէս
պիտի օգտուի անկէ :

ՀՈԳԱՅԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ .— Իբր հոգա-
տարը նիւթական չէնքին՝ մեծ գոհողութիւննե-
րով է որ Հոգարարծութիւնը կրցած են պահ-
պանել Եկեղեցւոյ մատակարարութեան հաւա-
սարակչութիւնը, եւ վարչական եւ յարաբե-
րական ամէն խնդիր միշտ Հոգեւոր Հովիւներու
նախադասութեամբ եւ համախորհուրդ կրցած
են վարել խղճմտութեամբ եւ սրտեռանդն ող-
ւով՝ ինչպէս ականատես իսկ եղայ այցելած
Թեմերու մէջ: Տնտեսական տաղնապր մեծա-
պէս ազդած է Հոգարարծութեանց գործառնու-
թեանց վրայ, եւ սակայն հակառակ ատոր տ-
նոնք զիտցած են Եկեղեցին պահել միշտ բարե-
գարդ եւ բարգաւաճ եւ պայծառ:

Հոգարարծութեանց կապը Առաջնորդա-
րանիս հետ պէտք է աւելի օրինաւորել եւ ա-
մուր դարձնել, այսինքն աւելի հետաքրքիր զի-
րենք պահել Առաջնորդարանով, որպէսզի ա-
նոնք միջոցներ ձեռք առնեն Առաջնորդարանի
նիւթականը ապահովելու համար: Հոգարար-
ծութեանց կողմէ զրկուած թեմական տուրքը
բացարձակ անբաւարար է, եւ հարկ է ըսել որ
Հոգարարծութիւնը աւելի զօրաւոր են իրենց
հանգամանաց մէջ քան Առաջնորդարանը, ըստ
որում Հոգարարծութիւնը ճանչցուած են կա-
ռավարութենէն իբր սեփականատէր Եկեղեցւոյ,
իսկ Առաջնորդարանը չէ ճանչցուած իբր գե-
րադաս հաստատութիւն Հայ Եկեղեցեաց:
Պէտք է միջոցներ ստեղծել Առաջնորդարանի
նիւթական եւ բարոյական գերակշիռ գիրքը
ամբաղնդելու համար նոյն իսկ Պատուարժան
Հոգարարծութեանց ջանքերով եւ լուրջ միջոց-
ներով:

Հոգարարծութիւնը պէտք է գոհողութիւն-
ներ ընեն Առաջնորդարանի նիւթական ապահո-
վութեան համար, եւ այս մասին անոնք ալ մե-
ղի հետ պէտք է խորհին Ազգային Տուրք գան-
ձելու գործնական միջոցներու վրայ:

Հոգարարծութիւնը պէտք է ունենան ժո-
ղովուրդի վիճակադրականը, այսինքն պատ-
կերացոյցը թեմական ներքին կացութեան եւ
ժողովուրդի ճշգրիտ թիւին, արանց եւ կանանց
եւ մանուկներու թիւը ճշգրտուած պայմա-
նաւ:

Կարգապահական տեսակէտով Հոգարար-
ծութեանց նախանձախնդրութիւնը ամէն գո-
վեստէ վեր է: Հոգարարծութեանց ատրնիւթեր
Օթանդակ Եկեղեցատիրաց եւ Դպրոցատիրաց նը-
ման մարմիններու կատարած սքանչելի գերը
ակնյայտնի կ'ընեն Հոգարարծութեանց ձեռ-
նարկներու արդիւնաւորման մէջ:

Նաեւ Հոգարարծութիւնը չեն խնայած որ-
եւէ ջանք կազմելու համար եկեղեցական Երգե-
ցիկ խումբեր, Դպրաց դասեր ժողովուրդի բա-
րեպաշտութեան գոհացում տուած ըլլալու նը-
պատակաւ եւ մեծապէս յաջողած են: Ուր որ
գտնուեցայ, տեսայ թէ Երգեցիկ խումբեր սի-
րայօթար նուիրուած՝ ամէն գոհողութիւն չեն
խնայած մեր Եկեղեցւոյ Պատարագի երգը գո-
րեզ եւ օրհնեալ տարր մը դարձնելու համար հո-
գեւոր շինութեան:

ԴՊՐՈՅՆԵՐԸ .— Ամերիկահայ Թեմերու
մէջ սկսուած է մեծ շարժում մը հայ դպրոց-
ներու եւ Հայ կրթական ձեռնարկներու մասին:
Այցելութեանս միջոցին, դպրոցներու արձա-
կուրդի չըջան ըլլալով՝ ատիթ չկրցայ ունենալ
մեր Դպրոցի մանուկներու եւ պատանեաց Հայ
լեզուի մասին սնուցած հետաքրքրութեան եւ
սիրտն չափը զիւնալ, բայց կեդրոնի մէկ քա-
նի դպրոցական հանդէսներու ներկայութեամբս
մեծ հաճոյքով տեսայ թէ մեր մանուկները ինչ
խանդ ու եռանդ ունին մաքուր արտասանելու
համար իրենց սորված դպրորիկ կոտորները
դպրոցական հանդէսի:

Ամէն տեղ եկեղեցւոյ կողքին Հայ դպրոցի մը գոյութիւնը տեսայ, նոյն իսկ եկեղեցիէ դրկուած զազութներու մէջ Հայ դպրոցի մը ջանքեր կը նշմարուի: Եւ ստուգիւ Հայ եկեղեցին առանց Հայ դպրոցի՝ իր հմայքէն շատ բան պիտի կորսնցնէր: Մեր զաւակներն որոնք Ամերիկայի մէջ ծնած եւ ամերիկեան կրթութիւն կը ստանան, հարկ է անդայժման որ Հայ դպրոցի կրթութեան եւ գաստիարակութեան բովէն անցնին: Թերեւս խորհուրդ որ առեւտրական եւ մեքենական բարոյականի մը վրայ հիմնուած երկիր մը, որուն պիտի կապուէր Հայ մանուկին բազբը, դժուար թէ թոյլ տար իր ներդրութիւնը պահելու Հայ դպրոցի հայեցի կրթութեան եւ գաստիարակութեան: Իմ համոզումս այն է որ մեր դպրոցներու մէջ աւանդուած եւ աննշան նկատուած մէկ քանի տարուան հայեցի կրթութեան եւ գաստիարակութեան դործը ամենամեծ նշանակութիւնը եւ ներդրութիւնը ունի եւ հրաշալի դրոշմը կը թողու նորահաս սերունդին վրայ: Ստուգիւ շրջապատուած ենք մեր հայկական, ազգային յատկանիշը տկարացնող վտանգներով: ալլ վրտանդները անվեհեր գիմադրուելու ենք, պէտք չկայ հաստակաւորող դպրոցներու եւ հոյակապ վարժարաններու: մեր վտըր դպրոցները կրնան պատրաստել ազգային ոգին, բաւ է որ խրճիթ նկատուած մեր դպրոցները կենսունակ պահենք եւ մեր մանուկներուն սիրելի ընծայենք: Ծրնողքները, մանաւանդ մայրերը մեծապէս պէտք է ստատրեն Մայրենի Լեզուին ուսուցման դործին, մեր ազգի պահապանն լեզուն է, նոյն իսկ պիտի լսէի հաւատքի պահապանն ալ լեզուն է, եթէ լեզուն կորսնցնենք՝ ամէն ինչ կորուսած կ'ըլլանք: Սահակ Մեսրոպի սքանչելի եւ հոյակապ հայկական վերածնութեան դործը սկըսաւ 404-ին, եւ պէտք է շարունակուի նոյն իսկ այս Ամերիկայի յայտնաւալ հոգամասի վրայ ցրուած Հայութեան մէջ առանց տկարացումի:

Դուք գիտէք բազմադարեան այն պատմութիւնը Մովսէս մանուկին, որ հակառակ իր

ընտանիքէն վերցուած ըլլալուն օտար իշխանուհիէ մը, իր մանկական շրջանի գաստիարակութիւնը անցաւ մօրը խնամոց եւ հսկողութեան ներքեւ: Եգիպտոսի բոլոր գիտութիւնները եւ արուեստները չկրցան աւերել մօրը տարած կարճ ժամանակի խանդակաթ խնամքը: Մեր Ամերիկահայ զաւակներն ալ կը մեծնան բոլոր Եգիպտոսի իմաստութեամբ, բայց թող չվախցնէ զԶեզ ալլ: Բաւ է որ մեր զաւակներուն մանկական եւ պատանեկան շրջանը մեր ազգային դպրոցներու մէջ անցուած ըլլայ, ալլ շրջանը իր ներգործութիւնը պիտի թողու ամբողջ կեանքի շրջանին վրայ: Եկեղեցիի քարոզները այնքան խոր տպաւորութիւն պիտի չթողուն մեր զաւակներուն վրայ, որքան դպրոցը իր հայեցի կրթութեամբ, դպրոցը՝ ուր մեր զաւակները իրենց լեզուաւ կ'ազօթեն, իրենց լեզուաւ կը կարդան եւ իրենց լեզուաւ կ'ըսեն: Եւ ինչպէս Մովսէս նախանձախնդիր եղաւ իր ցեղին Իսրայէլի համար, նոյն նախանձախնդրութիւնը պիտի երեւի մեր զաւակաց մէջ իրենց ազգին նկատմամբ:

Եկեղեցին՝ դպրոցով, եւ դպրոցը՝ եկեղեցիով կ'ապրի: անոնք որ յանդգնութիւնը կ'ունենան զանոնք իրարմէ անջատելու, անոնք երկուքն ալ կը մեռնեն: Երբ մին տկար կը թողունք եւ միւսը ուժեղ, վարձեալ վնասած կ'ըլլանք երկուքն ալ: Երբ եկեղեցական ստացութիւնները կը կորսնցնենք, կը կորսնցնենք նաեւ ազգային ստացութիւնները: Երբ կը մեռնի դպրոցը, կը մեռնի նաեւ եկեղեցին, ընտանիքն ալ, ազգութիւնն ալ:

Իբր եզրակացութիւն կը բաղձայի բոլոր սրտովս 1) Որ Հոգեւոր Հովիւներն եւ Հոգաբարձութիւններն իրենց Օթանդակ մարմիններով կենսունակ պահէին ընդ միշտ Եկեղեցին եւ Դպրոցը հայ ազգային նկարագրի անվթար պահպանման համար,

2) Որ Հոգեւոր Հովիւներն գիտակից իրենց պաշտօնին հաճէին աւելի եւս նուիրուիլ ոյժ

4320

տալու համար քարոցներու եւ կրօնական դա-
տախօսութեանց ,

3) Որ շարունակուէր երկեցողութեանց մա-
սին տարուած ջանքերը՝ աւելի խնամեալ ար-
դիական պայմաններու մէջ ,

4) Որ մեր դպրոցներու մէջ աւելցուէր կա-
րող ուսուցիչներու եւ ուսուցչուհիներու թիւը ,

5) Որ մեր դպրոցները Հոգաբարձութեանց
նման պատասխանատու մարմիններու կողմէ
հսկողութեան ենթարկուած ըլլալին , եւ դե-
կալարուէին Կեդր. Վարչութեան կողմէ պատ-
րաստուելիք ներքին կազմական կանոնադրին
համեմատ ,

6) Որ լսարանական դատախօսութիւններն
միայն հայ ազգային , հայ զեղարուեստական ,
հայ թատերական , հայ գրական , հայ մշակու-
թային բնոյթ ունենալին՝ կենսունակ պահելու
համար Հայ նոր սերունդին սէրն ու հետա-
քրքրութիւնը իր Եկեղեցւոյն եւ ազգին նկատ-
մամբ ,

7) Որ Առաջնորդարանն պետականօրէն
ճանչցուելու համար Հոգաբարձութիւնք օ-
ժանդակէին նիւթապէս եւ բարոյապէս Առաջ-
նորդարանի ձեռնարկներուն , եւ զործակցէին
մեզի՝ արդիւնաւորելու համար կարեւոր եւ էա-
կան այս հարցը ,

8) Որ վերջապէս Առաջնորդարանը կացուց-
ուէր ապահով աշխարհի վիճակի մը մէջ՝ որ կա-
րենար ան կատարել կանոնաւոր եւ անթերի
կերպով իր պարտականութիւնը :

Տեղեկագիրս կը վերջացնեմ Ամերիկահայ
մեծագոյն վիճակին բարգաւաճման , եւ պատ-
ուական եւ սիրելի ժողովուրդիս բարօրու-
թեան , ինչպէս եւ Պատկ. Երեսփ. եւ Վարչ.
Ժողովներու , եւ Գերապատիւ եւ Հոգեւորհ-
Հովիւներու եւ Պատուարժան Հոգաբարձու-
թեանց եւ Օժանդակ Մարմնոց համայնեց յա-
ջողութեան սրտազին բարեմաղթութիւններով :

Հայրական օրհնութեամբ

2002

ՂԵՒՈՆԴ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի



4188